

3917

3918

3919

3920

891-995

2-15

Հ. Աստուծոց:

82-3
7-

Ն. ՉԻԳԻԱՆԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՓԼԱՏ ՍԿՐԱԻՋԸ

(Ծննդեան վեպ)

2. Դ Ի Կ Կ Ե Ն Ս Ի

(Սնդիկերէնի համասարան)

ԹԱՐԳ. Ն. ՉԻԳԻԱՆԵԱՆ



№ I

СКРЯГА СКРУДЖЪ
(РОЖДЕСТВЕНСКАЯ СКАЗКА)

Ч. ДИККЕНСА
(Сокращеніе съ Англійскаго)

перев. Н. Чигіанянцъ

ТИФЛИСЪ

Тип. А. Меликъ-Шахназарова
Голов. Просп. домъ Рейтера.

Տպար. Ա. Միլիք-Չահնազարեանց
Գլխով. Պրոսպ. տան Բէյալերի:

1897

3186

Дозволено цензурою 8 апрѣля 1896 г. С.-Петербургъ



Չ. Գ Ի Կ Կ Ե Ն Ս

ՓԼԱՏ ՍԿՐՈՒՋԸ

(ՄՆՆԻԵԱՆ ՎԷՊ)

I.

Անգլիայի մայրաքաղաքում, Լոնդոնում, ապրում էին երկու վաճառական, որոնք ընկերովի առուտուր էին անում—նրանցից մէկի անունն էր Սկրուջ, միւսինը՝ Մարլէյ: Մարլէյն մեռնելով՝ իւր մասը Սկրուջին կտակեց: Սկրուջը թաղեց իւր ընկերոջը և ինքն միայնակ սկսաւ առուտուր անել, սակայն նշանատախտակը (BIB'ESKA) չը փոխեց և առաջուան պէս մնացին գրուած. «Սկրուջ և Մարլէյ»: Սկրուջին անուանում էին անձանօթ մարդիկ երբեմն Սկրուջ, երբեմն Մարլէյ, և նա հաւատարապէս ամէնքին էլ պատասխանում էր. նրա համար բոլորը միևնոյն էր: Սկրուջը շատ ժլատ մարդ էր, կատարեալ կեղեքիչ: Սկրուջի զէմքը կնճռատուած էր, քիթը սրածայր, մէջքն ուղիղ, աչքերը կարմիր, շրթունքները կապուտ, իսկ մազերը բոլորովին ճերմակ: Նա մի շատ ծածկամիտ և անհամակրելի մարդ էր. ոչ ոքի հետ նա չէր խօսում, ինչպէս և ուրիշները նրա հետ. ոչ ոք նրան իւր

մօտ չէր կանչում, ինչպէս և ինքն ուրիշներին. մինչև անգամ աղքատները չէին գնում նրա մօտ ողորմութիւն խնդրելու. եթէ պատահում էր որ մէկի հետ խօսէր, երբէք մի լաւ բան չէր ասիլ: Բայց Սկրուջի համար բոլորը նոյնն էր, և մինչև անգամ ուրախ էր լինում սրա վրայ:

Մի անգամ Ծննդեան գիշերը Սկրուջը նստած իւր գրասենեակում գրում էր: Գուրսը խիստ ցուրտ էր, և մարդիկ փողոցներում ոչ թէ գնում, այլ վազում էին, որպէս զի մի կերպ տաքանան. բացի սրանից խիստ մէդ էր. ժամի դեռ երեքն էր միայն, բայց բոլորովին մթնել էր, այնպէս որ դրացի խանութներում արգէն մոմեր էին վառել: Սկրուջը զբաղուած իւր գործով՝ երբեմն նայում էր բացուած դռնից իր գրագրի վրայ, որ նստած միւս սենեակում առևտրական նամակներ էր գրում, տեսնելու, թէ նա աշխատո՞ւմ է թէ ոչ: Գրասենեակում ցուրտ էր. Սկրուջի սենեակի վառարանը հազիւ վառվում էր, իսկ գրագրի սենեակի վառարանը բոլորովին հանգել էր: Գրագիրը վախենում էր ածուխ վեր առնել, արովհետև ածխամանը գրուած էր Սկրուջի սենեակում: Գրագիրը իւր վրին փաթաթեց տաք շալ և ուզում էր տաքանալ մոմի վրայ, բայց ինչպէս կարող էր տաքանալ:

Յանկարծ լսուեց մի ուրախալի ձայն:

— Շնորհակա՞նք Ծնունդ, քեռի: Վաղը ասն է:

— Ի՞նչես դուրս տալի, տօ, — սասց Սկրուջը:

— Ինչպէս թէ դուրս տալի, քեռի: Երևի դուք ուրիշ բան էիք ուզում ասել, բայց սխալուեցաք:

— Սմենեկին ոչ. ինչ ուրախութիւն. և ես չեմ հասկանում թէ ինչի վրայ ես ուրախանում. խեղճ ես, մի կուպէկ փող չունիս և ուրախանում ես:

— Իսկ դուք, քեռի, հարուստ էք, փող շատ ունիք, բայց չէք ուրախանում, — սասց ուրախ ուրախ իւր եղբորորդին:

Սկրուջը չէր իմանում ինչ ասի և մրմուսաց:

— Գու միշտ լիմար բաներ եմ ասում:

— Գեհ, միք բարկանալ, քեռի. ես հօ չէի ուզում ձեզ բարկացնել:

— Ինչպէս չըբար կանամ, երբ մարդիկ այդ պիսի լիմար բաներ են հնարել:

— Ուրախ տօնն է. էլ ինչ ասել կուզէ. տօնին ամենքին պարտաւոր ես փող տալ, հաշիւներդ վերջացնել, զրքերդ փակել և լիշել որ մի տարով ձերացել ես և մի կուպէկով էլ չես հարստացել: Թող կորչի այդպիսի տօնը: Ծօնիր այդ տօնը, ինչպէս դու ես ուզում, իսկ ես կրտօնեմ ինչպէս ես եմ ուզում:

— Բայց դուք ախր բոլորովին չէք տօնում, քեռի:

— Ձեմ տօնում, չեմ տօնում, քեզ ինչ: Ինչ օգուտ տօներից: Շատ բան ստացա՞ր դուն:

— Գեռի, Աստուած մեզ շատ բարիք է տուել, բայց մենք չենք օգտուում նրանցից, ինչպէս հարկն է: Բայց այնուամենայնիւ ես համարում

եմ որ այս օրն ամենալաւ օրն է բոլոր տարուայ մէջ. այսօր մարդիկ միմեանց աւելի շատ են ցաւակցում, միմեանց աւելի շատ բարիք ցանկանում, ամենից աւելի շատ ներում և աւելի շատ լիշում, որ մենք բոլորս եղբայրներ ենք:

Այս միջոցին Սկրուջի գրագիրն ուզեց տաքացնել իւր ձեռքերն իրար շփելով, բայց խփոյն վախեցաւ:

— Ի՞նչ ես աղմուկ հանում, սուգում ես որ այս տօնին արձակեմ քեզ պաշտօնից, — ասաց Սկրուջը բարկութեամբ:

Յետոյ դարձաւ դէպի իւր եղբորորդին և ասաց:

— Տղան, չափազանց շատախօս ես:

— Միք բարկանալ, քեռի, աւելի լաւ է վաղը գաք մեզ մօտ ճաշին:

— Ե՛հ, կորիւր հո՛, չեմ գալ:

— Ախր, ինչո՞ւ է:

— Որովհետև ամուսնացար քեզ նման խեղճի հետ:

— Բայց դուք դեռ իմ ամուսնութիւնից էլ առաջ չէք եկել ինձ մօտ:

— Դե՛հ լաւ, մնաս բարեաւ, տղաս, — ասաց Սկրուջը:

— Ախր ես ձեզանից ոչինչ չեմ խնդրում, քեռի, և ոչինչ էլ չեմ ցանկանում:

— Մնաս բարեաւ, — կրկնեց Սկրուջը:

— Սակայն դարձեալ մի անգամ էլ շնորհաորում եմ տօնը:

— Մնաս բարեաւ:

— Շնորհաւոր ծնունդ, ցանկանում եմ ձեզ երջանկութիւն:

— Մնաս բարեաւ, մնաս բարեաւ:

Եղբորորդին դուրս եկաւ տնից և ոչ մի վատ խօսք չարտասանեց:

Գոտն մօտ նա կանգնեց և գրագիրն էլ նոր տարին շնորհաւորեց. գրագիրը շնորհակալութիւն յայտնեց և նոյնպէս շնորհաւորեց իւր տիրոջ եղբորորդուն Քրիստոսի ծնունդը: Սկրուջը լսեց այս և մըմռաց:

— Ա՛յ ձեզ մէկ ուրիշ լիմար. շաբթէնը ըստանում է միայն 5 ու, ունի կին և երեխայք պահելու և էլի տօնն է լիշում: Ուղիղն ասած, մարդիկ լիմարացել են:

Շուտով գրասենեակը մտան երկու պարոն, վերառան զլիարկներն և կանգնեցին: Զեռներին բռնել էին գրքեր և թղթեր: Նրանք ողջունեցին Սկրուջին և հարցրին:

— Դուք պարոն Սկրուջն էք, թէ պարոն Մարլէ:

— Մարլէյն մեռաւ սրանից 7 տարի առաջ, հենց այս գիշերը, — ասաց Սկրուջը:

— Մենք ժողովարարութիւն ենք անում չքաւորների համար. շատերը զուրկ են նոյնիսկ ամենաանհրաժեշտ բաներից և մենք ուզում ենք

նրանց համար գնել որևէ բան այս աստի առթիւ:
Ինչքան կուզէք տալ:

— Ես ոչինչ չեմ տալ, — ասաց Սկրուշը, — և
խնդրում եմ ինձ հանգիստ թողնել: Ախր ես հարկ
եմ տալիս յօգուտ բանտարկեալների, աշխատա-
նոցների, աղքատանոցների, որբանոցների. ով ապ-
րելու կարողութիւն չունի, թող գնալ այնտեղ:

— Բայց բոլորը չեն կարող այնտեղ տեղաւո-
րուել, և շատերը աւելի լաւ կը համարեն մեռ-
նել սովից, քան թէ այնտեղ մտնել:

— Աւելի լաւ, — ասաց Սկրուշը — թող մեռ
նեն. քաղցածների թիւը կը քչանայ:

Պարոնները տեսնելով, որ Սկրուշն ոչինչ չի-
տալ չքաւորների օգտին, գլուխ տուին և դուրս ե-
կան: Իսկ Սկրուշը նորից նստեց ու սկսեց գրել.
Նա շատ գոհ մնաց, որ ոչինչ չըտուէց նրանց, և
աւելի ուրախացաւ:

Մի քանի ժամանակից յետոյ մի տղայ կանգ-
նեց այն պատուհանի առաջ, որի մօտ նստած էր
Սկրուշն և ողորմութիւն խնդրեց Քրիստոսի ա-
նունով: Տղան վատ էր հագնուած և ցրտից դող-
դողում էր: Սկրուշը վերցրեց քանոնը, սպառնա-
լով ցոյց տուէց տղին և վերկացաւ նրան խփելու.
տղան վախեցաւ և փախաւ:

Վերջապէս գրասենեակը կողպելու ժամա-
նակը հասաւ: Սկրուշը կամաց վերկացաւ տեղից,
մօտեցաւ զրագրին և ասաց.

— Դո՛ւք, երևի, վաղն ամբողջ օրը տանը
նստած կըմնաք, չէ:

— Եթէ թույլ կըտաք, ես Քրիստոսի Ծննդեան
աստին կըմնամ տանը:

— Ես զարմանում եմ, ասաց Սկրուշը, — թէ
ինչպէս մարդիկ անիրաւ են. դուք չէք ուզում
վաղը պարապել, իսկ եթէ ես ձեզ չըվճարեմ վա-
ղուան համար, դուք անպատճառ կընեղանաք,
իսկ միթէ նեղութիւն չէ ինձ համար վճարել ա-
մէն մի պարապ օրուայ համար:

— Բայց սա տարէնը մի անգամ է լինում, —
նկատեց զրագիրը:

— Ի՛նչ պատճառ. ասաց Սկրուշը, — միթէ
ներելի է ուրիշի գրպանը ձեռքը տանել տարէնը
մի անգամ: Ե՛հ, ինչ անես. վաղը հարկաւոր կը-
լինի ձեզ արձակել ամբողջ օրով, միայն հետե-
ւեալ օրն եկէք սրբան կարելի է կանուխ:

Գրագիրը խոստացաւ գալ կանուխ. Սը-
կրուշը դուրս գնաց գրասենեակից փնթփնթալով
քթի տակ: Գրագիրը մի ըուպէում փակեց գրասե-
նեակը, դուրս գնաց փողոցն և վազէվազ տուն
գնաց:

Սկրուշը հիւրանոց գնաց ճաշելու, ճաշի
նստեց, նայեց բոլոր լրագիրները, յետոյ ընթերցեց,
վերկացաւ և տուն գնաց քնելու: Նա կենում էր
մի հին տանն, այնտեղ, որտեղ առաջ կենում էր
իւր նախկին ընկերը, հանգուցեալ Մարլէյն: Տու-
նը զատարկ էր. նրա մէջ ապրում էր միայն

Սկրուջը մնացած սենեակները վարձու էին տրուած խանութների տեղ, որոնք բոլորն էլ փակ էին մնում: Սկրուջը բանալիով դուռը կողպեց և կամաց սանդուղքով դէպի վեր բարձրացաւ: Նա մօմը ձեռքին անցաւ բոլոր սենեակների միջից, նայեց բոլոր անկիւնները, վերադարձաւ իւր ննջարանը, դուռը կողպեց բանալիով, խալածն և հողածափները հագաւ, վառարանը վառեց, կրակի մօտ նստեց և մտածութեան մէջ ընկաւ:

Այդպէս անցաւ մի քանի ժամանակ: Յանկարծ քնի մէջ Սկրուջը լսեց մի ինչ որ աղմուկ, և նրան թուաց, որպէս թէ դռնից ով որ մտաւ և կանգնեց նրա առաջ: Նա լաւ նայեց նրան և տեսաւ մի մարդ, որ շատ նման էր Մարլէյին: Այս մարդն իւր յետեւից տանում էր մի շղթայ, որ շինուած էր կողպէքներից, բանալիներից և ոսկով լի պարկերից: Սկրուջը գունաթափուեց և հարցրեց:

— Ո՞վ ես դուն:

— Ես քո ընկեր Յակոբ Մարլէյն եմ:

— Ինչո՞ւ ես եկել ինձ մօտ:

— Ես միայն իմ մահից յետոյ հասկացայ, որ մարդս քանի կենդանի է, չըպէտք է խուսափե ուրիշներից և ապրի ոչ միայն իրեն համար, այլև ուրիշների: Հոգիս այժմ զղջում է այն բոլորի համար, ինչ որ կարող էր անել... բայց չի արել: Իմ հոգին տեսնում է այն բոլոր բարեքը, որ նւրան տուած է եղել ուրիշների բարեքների հետ

միասին և տեսնում է այն բոլորը, որ նա կորցրել է, բայց չի կարող յետ դարձնել անցածը:

Մարլէյն հառաչեց, շղթաները գետնովը տուեց և յուսահատութեամբ իւր ձեռքերն սկսեց կոտրատել:

— Այդ ինչ շղթայ է, որ դուն կրում ես, — հարցրեց Սկրուջը:

— Այս շղթան ես ինքս եմ կռել իմ կենդանութեան ժամանակ, միթէ չես տեսնում, թէ նա ինչիցն է շինած: Գուն կրում ես միևնոյն շղթան. եօթն տարի սրանից առաջ մենք երկուսս էլ այդ տեսակ շղթայ էինք կրում, և այն ժամանակից դուն ևս աւելի երկարացրել ես այդ շղթան: Ծանր է այս շղթան...

— Ուրիշ բան խօսիր, Մարլէյ, մխիթարիր ինձ:

— Ոչնչով չեմ կարող մխիթարել քեզ, ո՞վ Սկրուջ. դուն արդէն քո կեանքիդ կէսը կորցրել ես և այլևս չես կարող վերադարձնել: Այլևս ոչ մի յաւիտենական զղջումն չի կարող վերադարձնել այն դէպքերը, երբ մարդիկ սիրելով կարող էիր երջանիկ լինել:

— Բայց դուն լաւ էիր գործերդ տանում, Յակոբ:

— Գործէր, — աղաղակեց Մարլէյն. — իմ գործն էր միայն մի բան. սիրել մարդիկ և հոգ տանել նրանց վիճակի մասին: Իմ գործն էր սիրել Աստուծուն և մերձաւորներին, այլ ոչ թէ առուտուրն

աստուածացներ: Ծննդեան տօնին ես ամենից աւելի եմ տանջուում:

— Ուրեմն ի՞նչ անեմ, — բացականչեց Սկրուշը:

— Ի՞նչ անես — ես չեմ՝ կարող այժմ քեզ ստել: Իւրաքանչիւր մարդ վճռում է այս իւր կամքին համեմատ: Ես միայն մի բան կարող եմ քեզ համար անել, այն է ցոյց տալ քեզ այն բոլորն, ինչ որ առաջ էր, ինչ որ է այժմ և ինչ որ կըլինի ապագայում: Ուզում ես այդ տեսնել:

— Ուզում եմ:

— Ուրեմն գնանք:

Եւ յանկարծ Մարլէյն Սկրուշի ձեռքից բռնած՝ թռաւ նրա հետ միասին առաստաղի միջից դէպի տանիքը: Տանիքից թռան անցան դէպի օրիշների տանիքներն ու ամեն տեղ հանդիպեցան այն տեսակ հոգիներին, ինչպիսին էր Մարլէյն: Նրանք բոլորը մեռած մարդկանց հոգիներ էին:

Նրանք անհանգստութեամբ առաջ և յետ էին շարժուում, լաց էին լինում և հառաչում: Ամենքն էլ կրում էին այն տեսակ շղթայ, որպիսին Մարլէյն էր կրում: Նրանցից շատերին Սկրուշը ճանաչում էր իրենց կենդանութեան ժամանակ: Մի ծերունի, — Սկրուշը նրան լաւ էր ճանաչում — քարշ էր տալիս մի երկաթէ անկիզելի արկղ, որ նրա ոտքին էր կապուած:

Այս ծերունին դառնապէս լալիս էր, որովհետեւ չէր կարողանում օգնել մի խեղճ կնոջ, որ երեսխան ձեռքին նրա դռան շէմքի առաջ նստած էր:

Ակներև էր, որ այս բոլոր հոգիները տանջուում էին նրա համար, որ ուզում էին օգնել մարդկանց և ոչ մի կերպ չէին կարողանում այս անել:

Նրանք թռչելով անցան շինութիւնների տանիքներն և քաղաքից հեռանալով, դուրս եկան գիւղական ճանապարհը: Գիշերն անցաւ. լուսացաւ միշտ ցուրտ, ձմերային առաւօտ: Ամեն բան ձիւնով էր ծածկուած:

Մարլէյն հարցրեց.

— Յիշում ես դուն այս ճանապարհը:

Սկրուշը լաւ նայեց ճանապարհին, ձեռքերն թափ տուեց և բացականչեց.

— Աստուած իմ, այստեղ ես մեծացայ, այստեղ ես սովորեցայ:

Հազարաւոր մտքեր, յոյսեր, ուրախութիւններ և հոգսեր, որոնք վաղուց մոռացուած էին, յանկարծ զարթեցան Սկրուշի գլխում:

— Զարմանք, — ասաց Մարլէյն, — որ դուն երբէք չէիր լիշում այս ճանապարհը: Գնանք առաջ:

Նրանք շարունակեցին ճանապարհն և Սկրուշը սկսեց ճանաչել իւրաքանչիւր վայրը, իւրաքանչիւր սիւնը, իւրաքանչիւր ծառը: Շուտով նրանք տեսան մի փոքրիկ քաղաք: Հանդիպեցան տղաների, որոնք գնում էին կամ կառքով, կամ ձիով: Այդ տղաներն ուսումնարանի աշակերտներ էին, որոնք Ծննդեան տօնի պատճառով արձակուելով՝ տուն էին վերադառնում: Նրանք բոլորն

էլ ուրախ էին, բարձր բարձր խօսում էին և նրանց ուրախ ձայները սառն օդն էին թնդեցնում:

— Նրանք անցեալի սուուերներ են, — ասաց Մարլէյն: — Նրանք մեզ չեն տեսնում:

Բայց Սկրուշը նրանցից ամեն մէկին ճանաչում էր և նրանց անուններն էր տալիս: Ինչո՞ւ էր ուրախանում Սկրուշը տեսնելով նրանց: Ինչո՞ւ նրա սիրտը աւելի թունդ էր բաբախում: Ինչո՞ւ էր զուարճանում, երբ մանուկները բաժանուելիս միմեանց ցանկանում էին ուրախ անցկացնել տօները:

Մարլէյն ասաց.

— Իսկ դեռ դպրոցը բոլորովին չէ դատարկուել, այնտեղ մնացել է դեռ մի մանուկ: Ծնընդեան տօնին նրան ոչ ոք չըտարաւ:

— Ես ճանաչում եմ այն տղին, — ասաց Սկրուշըն և լաց եղաւ:

Նրանք դարձան ճանապարհից և գնացին գրպրոցը: Ղպրոցի շինութիւնը թէև մեծ էր, բայց գեղեցիկ չէր. այնպէս էր թւում, թէ այնտեղ տղաները թէ ցուրտ են զգում և թէ քաղց: Նրանք մտան երկայն սրահն, ուր գրուած էին գրպրոցական սեղաններ և նստարաններ: Այդ սեղաններից մէկի մօտ նստած էր մի տղայ և կարդում էր: Սա ինքն Սկրուշն էր, երբ նա դեռ երեխայ էր: Սկրուշն ինքն իրեն տեսաւ, երբ Ծննդեան տօնին միայնակ էր մնում դատարկ դպրոցում, որովհետև նրա ծնողները ուսումնարանից հեռու

բնակուելու պատճառով, չէին տանում իրենց մօտ: Նա նստեց սեղանի մօտ և դառնապէս լաց եղաւ: Յետոյ Սկրուշը ձեռքը տարաւ գրպան և արտասանեց:

— Ես կըցանկայի... Բայց այժմ արդէն ուշ է:

— Ի՞նչ, հարցրեց Մարլէյն:

— Երէկ իմ գրասենեակի պատուհանի առաջ մի այդպիսի տղայ ողորմութիւն էր խնդրում, ես կուզէի նրան մի բան տալ:

— Մարլէյն մտախոհութեամբ ժպտաց, թօթափեց ձեռքերն և ասաց.

— Այժմ տեսնենք ուրիշ տօները:

II.

Մանուկ Սկրուշն այժմ դարձել էր պարօն Սկրուշ, մեծացել էր. իսկ այն սենեակը, ուր մի ժամանակ նստում էր. հնացել էր: Տղան միայնակ էր. բոլոր տղաներն իրենց տներն էին գնացել տօներին: Նա չէր կարդում, այլ տխուր տրտում ման էր գալիս սենեակում և լաց լինում: Յանկարծ դուռը բացուեց և սենեակը մտաւ մի օրիորդ, որ տղայից էլ դեռահաս էր. օրիորդը փաթաթուեց տղայի վզին և սկսեց պաշալէլ նրան: Նա ծիծաղում էր, ծափահարում էր և ասում.

— Ես քեզ համար եկայ, սիրելի եղբայր, ես քեզ տուն կըտանեմ, տուն, տուն... և օրիորդն ուրախութիւնից թռչկոտում էր:

— Ինչպէս թէ տուն, Մարիամ. — Հարցրեց տղան:

— Այո՛, տուն, բոլորովին, մշտապէս տուն. ես խնդրեցի հօրիցդ և նա թոյլ տուեց գալ քեզ մօտ. տանելու: Իուն արդէն մեծացել ես և այսուհետև էլ չես վերադառնալ այստեղ: Ամեն տարի Ծննդեան տօնը կանցկացնենք միասին և մենք շատ ուրախ կըլինենք:

Քոյրն անհամբերութեամբ տարաւ եղբօրը դէպի գուռը: Մարլէյն ասաց Սկրուշին.

— Քոյրդ միշտ այդպէս բարի է եղած:

— Այո՛, այդ ուղիղ է. — ասաց Սկրուշը, — ես սիրել եմ միշտ:

— Գիտես, որ նա մի օրբ թողեց, մի քրոջուրդի. Սկրուշն ամաչեց և մրմռաց:

— Այո՛, ես այդ գիտեմ:

Սրանից յետոյ, նորից մտան քաղաք: Երեւում էր որ այդտեղ էլ տօն օրեր էին:

Երեկոյ էր. փողոցներն արդէն լուսաւորուած էին: Մառլէյն կանգ առաւ մի խանութի առաջ և հարցրեց.

— Գիտես ումն է այս խանութը:

— Գիտեմ, ես այստեղ էի սովորում:

Նրանք մտան խանութը: Առանձին սեղանի մօտ նստել էր ծերունին և ինչ որ բանով զբաղուած էր:

— Աստուած իմ սա իմ նախկին խանութատէրըն է: Ինչպէս ուրախ եմ, որ նա դեռ կենդանի է:

Ծերունին գրիչը դրեց սեղանի վրայ, ժամացոյցին նայեց, ձեռքերը շփեց, ծիծաղեց և ուրախ, ուրախ բացականչեց.

— Է՛յ, Գրիգօր, Յովհաննէս, եկէք այստեղ:

Սկրուշը դարձեալ մտաբերեց իւր երիտասարդութիւնն և ճանաչեց իւր ընկերոջը, Յովհաննէսին:

— Նա ինքն է, ինչպէս էր սիրում ինձ, Աստուած իմ:

Ծերունի խանութատէրն ասաց.

— Իե՛հ, տղերք, վերջացրէք: Այսօր Քրիստոսի Ծննդեան գիշեր է. պատուհանները փակեցէք և աւելորդ բաները վերցրէք, որ ազատ տեղ բացուի:

Ինչպիսի մեծ ուրախութեամբ սկսան. իսկոյն փակուեցան լուսամուտները, գուրս տարան ինչ որ աւելորդ էր, տախտակամածն աւլեցին, լամպաները դրստեցին և վառարանը վառեցին:

Յանկարծ սենեակը ներս մտաւ ջուլթակահարը. նրանից յետոյ ներս մտաւ տանտիկինը. յետոյ ներս մտան նրա դերահաս աղջիկներն իրանց փեսաներով. ներս մտան նոյնպէս գործակատարներն և գործակատարուհիները. մտաւ և աղախինն իւր կնքահայրով. հացթուխը, խոհարարուհին դռնպանի հետ միասին. մտաւ նաև մի տղայ հարեւանի տանիցը: Ջուլթակահարը սկսեց ածել և պարերը սկսան: Ամէնքը պարում, զուարճանում և ծիծաղում էին: Յետոյ ընթրիքը սկսուեց և ամենքը սեղան նստան: Վերջապէս երեկոյթը վերջա-

ցաւ: Տանտէրն ու տանտիկինը կանգնեցին դռան մօտ, մնաս բարով ասեցին Տիւրերին և ցանկացան իւրաքանչիւրին ուրախ անցկացնել դռները: Այս բոլորի ժամանակ Սկրուշը կարծես նոր սկսեց ապրել երիտասարդական կեանքով, ամէն բան յիշեց, ամէն բանի վրայ ուրախացաւ:

— Մարլէյն ասաց.

— Ինչ քիչ բան է հարկաւոր մարդուս, որ նա գոհ լինի իւր վիճակից: Ինչպէս բոլոր Տիւրերը գոհ էին և այս ուրախ ժամերի համար տանտերերը ծախսեցին միայն մի քանի ըուբլի: Ա՛րժէ միթէ նրանց գովել սրա համար:

— Բնաւ բանը սրանում չէ, — ասաց Սկրուշը: Նրանցից էր կախուած, որ բոլոր Տիւրերն ուրախանային, իսկ թէ ինչով արին այս, միթէ միևնոյն չէ, հայեացքով, խօսքով թէ՛ փողով:

Մարլէյն խիտ նայեց Սկրուշին և ասաց.

— Դուն հիմա էլ այդպէս ես մտածում:

Սկրուշը շփոթուեց և մրմռաց.

— Ես հիմա կուզէի տեսնել իմ խեղճ գրագրիս:

Նրանք դարձեալ թռան և մտան ուրիշ տուն: Սկրուշը նորից իրեն ճանաչեց, բայց հիմա աւելի մեծ էր, առոյգ երիտասարդ: Նրա դէմքը դեռ ևս չէր ժանգոտուել, ինչպէս ծեր ժամանակ, բայց նկատելի էին վրան ժլատութեան և հոգսերի հետքեր: Աչքերն անհանգստութեամբ վազվզում էին և ամաչում էր: Նրա կողքին նստած էր մի գեղե-

ցիկ օրիորդ, իւր նշանածը: Նա լալիս էր:

— Հիմա քեզ համար ոչինչ է, որ ես լալիս եմ. դուն վազուց ինձ փոխեցիր ոսկու հետ, ասաց օրիորդը: Ես տեսնում էի, թէ ինչպէս փոքր առ փոքր քո մէջ պակասում էին այն ամենը որ լաւ էր և հիմա մնացել է քո մէջ միայն մի իղձ, մի ցանկութիւն—որքան կարելի է շատ հարստանալ: Միթէ ուղիղ չէ այս:

— Երբ մենք միմեանց հետ ծանօթացանք, մենք երկուսս էլ խեղճ էինք, և երկուսս էլ կամենում էինք խեղճ ապրել մեր ազնիւ աշխատանքով և այն ժամանակ դուն ուրիշ մարդ էիր:

— Այո, բայց ես այն ժամանակ տղայ էի:

— Տես դուն էլ ես ասում, որ այն ժամանակ ուրիշ էիր, իսկ ես մնացի այն, ինչ որ էի: Այժմ մենք չենք կարող երջանիկ ապրել միասին: Ես շատ մտածեցի այս բանի մասին և վճռեցի բաժանուել քեզանից:

— Միթէ ես այս էի ցանկանում, — ասաց Սկրուշը:

— Դուն բոլորովին փոխուեցար ամեն բանի մէջ, հոգևով և սրտով: Ես գիտեմ, որ այժմ չէիր ամուսնանալ խեղճ օրիորդի հետ, որովհետև դուն սիրեցիր լոկ արծաթը: Մնաս բարեաւ, դուն ինձ շուտով կը մոռանաս: Աստուած քեզ երջանիկ պահէ քո մնացած կեանքում:

Օրիորդը գնաց և նրանք բաժանուեցան:

— Ո՛հ Մարլէյ. ինչու ես դուն այս բոլորը

ցոյց տալի, ինչու ես տանջում չարչարում: Տնոր
ինձ տուն:

— Ես միայն ցոյց եմ տալիս այն, ինչ որ ե-
ղած է: Ես մեղաւոր չեմ, որ այդ բոլորն այդպէս է:

— Տնոր ինձ տուն, ես չեմ կարող այս բոլորին
դիմանալ:

— Դե՛հ լաւ, — ասաց Մարլէյն: — Տեսնենք այժմ
ներկան, ուզո՞ւմ ես:

— Ուզում եմ:

— Դե՛հ, բունիւր շորիցս:

III.

Երբ Մարլէյն և Սկրուշը դուրս եկան փողոց,
արդէն լուսացել էր. Ծննդեան առաւօտ էր: Յան-
կարծ Սկրուշն իրեն տեսաւ իւր գրագրի տանը: Նա
տեսաւ գրագրի կնոջը, որը թէև աղքատիկ, բայց
մաքուր էր հագնուած: Նա սեղան էր պատրաս-
տում, և նրան օգնում էր իւր անդրանիկ դուստ-
րը: Անդրանիկ տղան գետնախնձոր էր եփում: Սե-
նեակը ներս վագեցին փոքրիկ երեխաները, տղան
և աղջիկը: Երեխաները բաւուր էին, որ վառա-
րանի մօտ խորոված բաղի հոտ է կանգնած և նը-
րանք իմացան, որ այդ իրանց խորոված բաղն է:
Ուրախութիւնից երեխաները թռչկոտում էին սե-
ղանի շուրջը:

— Ո՛ւր կորաւ հայրիկն իւր Թովմասով, — ա-
սաց մայրը: Մարթան էլ անցեալ տարի ուսում-

նարանից տուն եկաւ կէս ժամ առաջ:

— Ահա և ես, մայրիկ, — ասաց օրիորդը, սե-
նեակը մտնելով:

— Մարիա, Մարիա, ինչ լաւ բաղ է այն-
տեղ, գոչեցին երեխաները:

— Ի՞նչու ես այդպէս ուշ գալիս, հոգիս, ա-
սաց մայրն և սկսեց խնամքով հանել նրա վերնա-
զգեստը:

— Երբ աշխատանքը վերջացրինք, մայրիկ, յե-
տոյ — բոլորը հաւաքեցինք:

— Տես հայրիկը գալիս է, — կանչեցին երեխա-
ները, թնօգ կաց, Մարթա, թնօգ:

Մարթան թնօգ կացաւ, իսկ սենեակը մտաւ
գրագիրը: Նրա հին զգեստը նորուած և մաքրու-
ած էր: Ուսի վրայ նստել էր նրա փոքրիկ տղան
Թովմասը: Տղան կաղ էր և փայտերով էր ման
գալիս: Գրագիրը յետ նայեց և հարցրեց:

— Իսկ ո՞ւր է մեր Մարթան:

— Այսօր նա չի գալ, ասաց մայրը:

— Ինչպէս: Ծննդեան տօնին էլ չի գալ:

Գրագրի ուրախութիւնը բոլորովին կորաւ:
Բայց Մարթան չը համբերեց, դուրս ընկաւ գը-
ռան յետքից և ընկաւ հօր վզովը:

Շուտով երեխաները մեծ ուրախութեամբ բե-
րին բաղը դրին սեղանի վրայ: Մի այնպիսի աղ-
մուկ բարձրացաւ, որ կարելի էր կարծել, որ բա-
ղը — ամենաթանգագին թուչուն է աշխարհիս երե-
սին: Ամենքը զարմանում էին բաղի վրայ, թէ

ինչպէս գեր է, հիւթալից և մեծ է, այնպէս մեծ, որ նրանից մեծ էլ չը կայ աշխարհիս երեսին. նա ամենքին կը բաւէ, ինչպէս լաւ հոտ ունի: Ամենքը նստան ճաշի. ամենքին էլ բաւեց բաղն, ու երեխաները դունչն ու պուռնգը իւղոտեցին:

Սկրուջը հարցրեց Մարլէյին:

— Ասա ինձ Մարլէյ, կապրի Թովմասը:

— Ինչ կը լինի, եթէ երեխան էլ մեռնի: Եթէ մեռնելու է, թող մեռնի. քաղցածների թիւը մէկով կը պակասի աշխարհումս:

Սկրուջը գլուխը քարշ ձգեց, երբ լսեց իւր սեփհական խօսքերը, բայց շուտով լսեց իւր անունը:

— Իմ տիկնոջ Սկրուջի կենացը, ասաց գրագիրը:

— Եթէ նա այստեղ լինէր, — ասաց կինը, ես նրան կասէի թէ ինչ եմ մտածում նրա մասին. թող անուշ անէր:

— Սիրելիս, — հեզութեամբ ասաց գրագիրը, — ինչ օրինակ ենք տալիս մեր երեխանցը. Յիսուս Քրիստոսը կտակեց մեզ համբերութիւն ունենալ և ներողամիտ գտնուիլ միշտ:

— Միայն Ծննդեան տօնին եթէ կարելի է խմել Սկրուջի կենացը:

— Տայ Աստուած երկար տարիներ երջանիկ ապրել մեր տիրոջը, պ. Սկրուջին, բացականչեց գրագիրն և ամենքը խմեցին կենաց թասը:

Մարլէյն և Սկրուջը գտան իրանց մի ուրիշ տանը. Սկրուջը տեսաւ իւր եղբորորդուն, որը ծի-

ծաղից մեռնում էր, փորը բռնել, գլուխը շարժում և դէմքը ծուրում էր: Եղբորորդու կինն ու բոլոր հիւրերը նոյնպէս ծիծաղում էին:

Նա ասաց.

— Ինչ յիմարութիւն եմ ասում. Հա հա հա. Զարմանալի ծերունի է և ոչ բոլորովին բարի մարդ: Ի՜նչ, սակայն իրեն համար աւելի վատ է. բայց ինչո՞ւ նեղանալ նրա այդ վարմունքի վրայ:

— Նա հարուստ է, Յովհանէս, ասաց կինը:

— Ինչ անենք որ հարուստ է: Ո՞ւմն ինչ օգուտ նրա հարստութիւնը, թէ իրեն թէ ուրիշներին:

— Նրա հետ ապրել անկարելի է, ասաց կինը:

— Իսկ ես, — ասաց եղբորորդին, — բոլորովին, ցաւում եմ նրա վրա: Ես մինչև անգամ դիտմամբ չեմ կարող նրա վրայ բարկանալ: Նոյն իսկ իրեն վնասում է իւր բնաւորութիւնը: Չի սիրում մեզ և վերջացաւ: Ինքն է մեղաւոր, որ մնաց առանց մեր ճաշի: Ես հաւատացած եմ, որ նա մեզ մօտ աւելի ուրախ կանցկացնէր ժամանակը, քան միայնակ իւր տանն, ուր ոչ ոք չկայ: Սակայն ամէն տարի ես կրկանչեմ նրան իւրաքանչիւր ծընընդեան տօնին. իսկ ինքն ինչպէս ուզում է, այնպէս վարուի, ես նրան խղճում եմ: Թող նա հայհոյէ, ես այնուամենայնիւ ամէն տարի գնալու եմ նրա մօտ ծննդեան տօնը շնորհաւորելու և տ'էն բարիք ցանկանալու: Գուցէ սրանից փոքրի շատէ մեղմանայ:

Մուտով ամէնքը սկսան խաղալ: Խաղի անու-
նը «այո» կամ «ոչ» էր: Յովհաննէսը մի հանե-
լուկ էր ասում, իսկ միւսները վճռում էին, զա-
նազան հարցեր տալով, Յովհաննէսը կարող էր
պատասխանել «այո» կամ «ոչ»:

Բազմաթիւ հարցերից յետոյ Յովհաննէսն ասաց
այն ինչ կենդանի է որ միշտ մըմուռն է, եր-
բեմն խոզի պէս խռնչում է, երբեմն խօսում, ապ-
րում է Լոնդոնում, պտտում է փողոցները, ցոյցի
չեն մանածում, գազանանոցում չէ գտնւում, մոր-
թել կարելի չէ. ոչ ձի է, ոչ կով, ոչ էջ է, ոչ
էլ եզ, ոչ վագր է, ոչ էլ շուն, ոչ խոզ է, ոչ էլ
կատու, ոչ էլ մուկ: Իւրաքանչիւր հարցի վրայ
Յովհաննէսը ծիծաղից մեռնում էր և վերջապէս
վեր թռչելով թիկնաթուռից, փորը բռնեց ու ըս-
կսեց ոտքերը գետնին զարկել:

Յանկարծ նրա կնոջ փոքր քոյրերից մէկը
բացականչեց.

— Ես գտայ, Յովհաննէս, ես գտայ, ես գի-
տեմ սա ինչ է, ես գիտեմ սա ինչ է. քո քեռի
Սկրու-ու-ուլըն է...:

Ամենքը ծիծաղից մեռան:

— Տեսնում էք, ինչպէս քեռի Սկրուլը մեզ
գուարճացրեց. իբրև շնորհակալութիւն խմենք
նրա կենացը— ուրախ ուրախ աղաղակեց եղբորոր-
դին:

— Լաւ, լաւ, — աղաղակեցին ամենքը— խմենք
նրա կենացը:

Յովհաննէսը բարձրացրեց բաժակն և ասաց.
— Յանկանում եմ ծերունուն ուրախ տօներ,
նա թէև չը կամեցաւ ընդունել ինձանից իմ բա-
րի ցանկութիւնները, բայց թող կատարուեն: Բե-
ռի Սկրուլի կենացը:

Սկրուլն այդ բոլորը տեսնելով ինքն էլ ու-
րախացաւ և ծիծաղեց և թուաց թէ նրա սիրտը
թեթեացաւ և մինչև անգամ կամեցաւ ի պատաս-
խան նրա խմել իւր կողմից նրանց կենացն և ա-
սել մի քանի քաղցր խօսքեր—բայց յանկարծ ան-
երևոյթացաւ:

IV.

Մարլէյն կանգնած էր Սկրուլի մօտ և հարց-
նում էր,

— Ազգում ես այժմ տեսնել թէ ինչ կըլինի
յետոյ, այսինքն մի քանի տարուց յետոյ:

— Ազգում եմ, — ասաց Սկրուլը: Ես այժմ,
Մարլէյ, ամենից աւելի քեզանից եմ վախենում,
և յուսով եմ, որ դեռ կարող եմ ուրիշ մարդ
դառնալ և քո ետեից կրգամ ուրախութեամբ:

Յանկարծ նրանք եկան քաղաքի կեդրոնը,
բօրսան— ուր հաւաքուում են վաճառականներն ի-
րենց առևտրական գործերի համար: Վաճառական-
ները խումբ խումբ հաւաքուած տաք տաք վի-
ճում էին կամ փսփսում իրար ականջին, վազում դէս
ու դէն, խօսում և այլն: Մի քանի վաճառականներ

կանգնել էին մի տեղ. Սկրուջը մօտեցաւ նրանց
և ականջ դրեց թէ ինչ են խօսում:

— Աւելի բան չը գիտեմ, — ասաց մէկը, — գի-
տեմ միայն, որ նա մեռաւ:

— Ե՛րբ, — հարցրեց միւսը:

— Կարծեմ, երեկ գիշեր:

— Բայց ի՞նչից մեռաւ նա: Ես կարծում էի
թէ նա երբէք չի մեռնիլ:

— Աստուած գիտէ թէ ի՞նչից. — ասաց առաջի-
նըն և յօրանջեց:

— Բայց ո՞ւմը կտակեց իւր կարողութիւնը:

— Չեմ լսել, միայն գիտեմ, որ ոչ ինձ: Ամեն-
քը ծիծաղեցին:

— Թաղումն մեծ չի լինիլ: Ո՞վ կըլինի թաղ-
մանը:

— Այո ես կերթամ, լաւ քելեխ կըլինի:

Գարձեալ ամէնքը ծիծաղեցին:

— Եթէ ուրիշները կըզնան, ես էլ, էհ, կեր-
թամ: Ես նրա ամենալաւ բարեկամն էի: Երբ մի-
մեանց հանդիպում էինք, միշտ ասում էինք.

— «Ողջոյն, Սկրուջ», «Ողջոյն» պատասխանում
էր նա: Կամ «մնաս բարեաւ, Սկրուջ, մնաս բա-
րեաւ» պատասխանում էր, հա՛, հա՛, հա՛:

Սկրուջն ոչ մի կերպ չէր կարողանում հաս-
կանալ թէ ում մասին են խօսում և չէր կարողա-
նում գուշակել, որ իրեն մասին էին խօսում:

Յետոյ գնացին քաղաքի ամենախուլ մասը,
ուր կենում էին գանազան աւաղակներ ու գողեր:

Նրանք կանգնեցին մի կեղտոտ խանութի առաջ,
որտեղ ծախում էին հին շորեր: Ծերունի խա-
նութպանը մի 70 ամեայ խաբեբայ մարդ էր,
նստած էր հին շորերի մէջ: Խանութը մը-
տան երկու կին մեծ կապոցները ձեռքերնին և
մի տղամարդ:



— Նայիր, ծերունի, վաստակ կայ քեզ — ասաց կինը. — իզուր չը
հանդիպեցինք մենք բոլորս այստեղ:

Առաջին կինն օրով աշխատող մի բանուորու-
հի էր, երկրորդը — լուսացարար, իսկ տղամարդը գե-
րեզմանափոր: Բանուորուհին բացեց իւր կապոցը:
— Ծերունի, ի՞նչքան ես տալու իմ ապրանքին:
Գերեզմանափորը գրպանից հանեց ձեռ-
նոց, մի գոյզ կոճակ և մի մատանի ու ցոյց

տուեց ծերունուն: Ծերունին ուշադրութեամբ տնտղեց իւրաքանչիւր իրն և պատի վրայ կաւիճով գրեց, թէ իւրաքանչիւր իր ինչ արժէր:

Լուսցարար կինը ցոյց տուեց իւր կողոպուտը. սաւաններ, երեսօրբիչներ, դերիաներ, թէյի երկու դրգալ, շաքարի ունեւիք և մի գոյգ կօշիկ: Ծերունին պատի վրայ գրեց նաև այս իրերի գըները:

Յետոյ բանուոր կինը կապոցից հանեց մի մեծ ծանր ծրար:

— Ահա ևս իմ մահճակալի հովանին — ասաց նա:

— Մթթէ մահճակալից պոկեցիր նրան, երբ նա վրան էր:

— Հապա ինչպէս:

— Ինչ նշանակում է դրամագլուխ ես ժողովում:

— Ի հարկ է ձեռքիցս չեմ թողնում, ինչ որ կարելի է: Ահա նրա վերմակը:

— Ի՛նչ, նա վարակիչ հիւանդութիւնից չը մեռաւ:

— Մի վախենար, կարծում ես այն ժամանակ այդպիսի մի չնչին բանի համար նեղութիւն կը կրէի: Ահա և շապիկը. համարեա թէ բոլորովին նոր է. եթէ ես չը լինէի, նա կը կորչէր. հենց նրա մէջ էլ կը թաղէին. ով որ լիմարաբար նրան հագըրէց, իսկ ես հանեցի:

Ծերունին հանեց գրպանից փողով լի քսակն և փողը վճարեց:

— Ահա և ամեն բանի վերջը — ասաց բանուոր կինը: — Կեղանութեան ժամանակ ամենքին իրենից քշում էր, նրա համար երևի, որ մեզ մնար ամեն բան... հա, հա, հա...

— Սկրուջն ականջ էր դնում այս բոլորին սարսափով և զգուանքով:

— Տեսնում եմ, տեսնում, հասկանում եմ — ասաց նա: — Եւ ինձ հետ էլ կարող էր պտտահել այն, ինչ որ պտտահեց այս ննջեցեալի հետ: Ես դնում եմ միւսնայն ճանապարհով: Աստուած իմ, այս ի՛նչ բան էլ...

Յետոյ Սկրուջը յանկարծ գտաւ իրեն մի ուրիշ տեղ, մի ինչ որ մահճակալի մօտ. նրա վրայ մաշուած ծածկոցի տակ ինչ որ ընկած էր: Սենեակում մութն էր և ոչինչ չէր կարելի ջոկել: Սկրուջը կամեցաւ իմանալ, թէ սա ինչ սենեակ է և նա մի տեսակ նախազգացմունքով և անհանգըստութեամբ նայում էր իւր շուրջը:

Ադօտ լոյսը պտտահանից ուղղակի ընկնում էր մահճակալի վրայ: Մահճակալի վրայ դրած էր մի մարդու դիակ, որին կողոպտել, բարձի թողի էին արել: Սկրուջը կամեցաւ յետ քաշել վերմակն և տեսնել թէ ով է այնտեղ, բայց ոչ մի կերպ չկարողացաւ այդ անել: Սկրուջը մտածեց. «Ահա թէ ուր հասցրին այս մարդուն նրա ժլատութիւնը, ազահուլութիւնը, խստասրտութիւնը»:

Նա պառկած էր միայնակ մի մութը գատարկ

տան մէջ, և աշխարհիս վրայ չըկար մի մարդ, որին երբեւիցէ ասէր գէթ մի քաղցր խօսք և որն այժմ նրա վերայ ցաւէր: Միայն կատուն էր դռան մօտ քսուում և մկներն էին վառարանի տակ կրճում:

— Այս սասափելի է, — ասաց Սկրուշը: — Ես այս երբէք չեմ մոռանալ: Հեռանանք այս տեղից: Մարլէյն շարունակում էր մատնացոյց անել գըլ-խի տակը:

— Ես չեմ կարող... Ազաչում եմ քեզ... ցոյց տուինձ մէկին, որին ցաւեցնէր այս մարդու մահը:

Նրանց առաջ երևաց մի ուրիշ սենեակ: Այնտեղ ապրում էր մայրն իւր գաւակներով: Մայրը պտտում էր սենեակում և անհանգստութեամբ նայում էր երբեմն լուսամուտին, երբեմն ժամացոյցին, կարծես մէկին սպասում լինէր: Վերջապէս լսուեց դռան թրխկոց. կինը վազեց դէպի դուռը և հանդիպեց իւր ամուսնուն:

— Ի՞նչ արեցիր, — հարցրեց կինը:

— Ոչինչ, — պատասխանեց ամուսինը. — Ես չըկարողացայ պարտքով փող վերցնել:

— Մենք, նշանակում է, կորանք, եթէ նա չի խղձայ մեզ և չի լետաձգիլ պարտքի հատուցումն:

— Նա այլևս չի կարող խղձալ, նա արդէն մեռաւ:

Ամուսինը մի բարի, համբերատար կին էր, բայց այս լսելով, նա ուրախացաւ և ասաց.

— Ուրեմն, փառք Աստուծոյ. ուրեմն ո՞ւմ պէտք է հատուցանել մեր պարտքը:

— Չգիտեմ, բայց այժմ այսպէս թէ այնպէս կրչետաձգուի պարտքի հատուցումն և այս միջոցին կարող կըլինենք ուրիշից պարտք վերցնել: Գուցէ այս անգամ մենք չենք հանդիպիլ այսպիսի մի անգուլթ արարածին: Այսօր յամենայն դէպըս կարող ենք պառկել հանգիստ:

Ահա բոլորն, ինչ որ Մարլէյն կարող էր ցոյց տալ Սկրուշին:

— Մարլէյ, ասս ինձ, այն ո՞վ էր, որ պառկած էր մերկ մահճակալի վրայ:

Մարլէյն առաջ տարաւ նրան: Յանկարծ Սկրուշը կանգնացրեց նրան և ասաց.

— Կ'սց, ահա այդ տեղ էր իմ գրասենեակն, թոյլ տուր ինձ նայելու:

Սկրուշը վազեց դէպի իւր գրասենեակն և նայեց լուսամուտից:

Գրասենեակն էլ նրանը չէին, կահ կարասիքը նմանապէս նրանը չէին, և աթոռի վրայ էլ նա չէր նստած:

Նրանք շարունակեցին ճանապարհն և մտան գերեզմանատուն... Նրանք կանգ առին գերեզմանների մէջ, Մարլէյն մատնացոյց արաւ Սկրուշին մի գերեզմանի վրայ:

— Ասս ինձ Մարլէյ, այն, ինչ որ դուն ինձ ցոյց տուիր, անպատճառ պիտի կատարուի, թէ ուրիշ կերպ էլ կարող է լինել, հարցրեց Սկրուշը:

Մարլէյն լուռութեամբ մատնացոյց էր անում գերեզմանի վրայ:

— 25 որ, թէ մարդս փոխուելու է, Մարլէյ, կը-
 փոխուի նաև նրա վախճանը, — շարունակեց Սրկուշը:
 Մարլէյն լուեց: Սկրուշը մօտեցաւ գերեզմանին
 և ամբողջ մարմնով գողալով, կարգաց գերեզմա-
 նաքարի վրայ իւր ամբողջ անունն և ազգանունը:



— Ուրեմն այսպէս ես եմ այն մարդը...

Սկրուշը պինդ բռնեց Մարլէյի ձեռքից և
 աղաղակեց.

— Լսիր ինձ. ես էլ այն չեմ, ինչ որ էի ա-
 ռաջ, և էլ երբէք այն չեմ լինիլ: Սարսափելի են
 քո ցոյց տուած բաները: Ես երբէք չեմ մոռանալ
 նրանց: Հիմա ես հաւատում եմ Քրիստոսին, հաւա-
 տում եմ, որ մարդուս երջանկութիւնը կայանում
 է մարդիկ սիրելու, մարդկանց զթալու մէջ:

Սկրուշը զարթնեց իւր սեպհական մահ-
 ճակալի վրայ:

V.

Այն, Սկրուշը գտնուում էր իւր սեպհական
 տանը, և իւր սեպհական մահճակալի վրայ էր
 պառկած: Սկրուշը շատ ուրախ եղաւ, տեսնելով
 որ դեռևս ինքն կենդանի է և ժամանակ
 կայ սխալն ուղղելու և իւր կեանքի ընթացքն փո-
 խելու:

Սկրուշը վեր թռաւ մահճակալից և ասաց.

— Այժմ ուրիշ կեանք է սկսուելու. նրանից
 յետոյ, ինչ որ ես տեսայ, կարծես ինձ նոր ծը-
 նուած եմ զգում: Բարեկամս, Յակոբ Մարլէյ, օրհ-
 նե՛ալ լինի Առտուած և Քրիստոսի ծնունդը:

Նրա ձայնն ընդհատուեց և աչքերն արտա-
 սուքով լցուեցան:

Նա սկսեց հագնուել, բայց շփոթութեան
 մէջ չէր կարողանում իւր շորերը գտնել: Նա ծիծա-
 դում էր, լաց էր լինում և ասում.

— Ես չըզիտեմ, թէ ինչ անեմ. ես բաղդա-
 ւոր եմ ինչպէս հրեշտակ:

Տայ Աստուած, որ ամէնքը բաղդաւոր անց-
 կացնեն Ծննդեան տօնը: Ես մինչև անգամ չըզի-
 տեմ, թէ այսօր ինչ օր է, ես կատարեալ մանուկ
 եմ:

Սկրուշը լուսամուտից դուրս նայեց. ոչ մէջ

էր, ոչ մառախուղ,—պարզ, պայծառ, թէև ցուրտ
օր էր, ճաճանչափայլ արևն էր դուրսը, կապոյտ
երկինք և մաքուր օդ: Լուսամուտի տակ Սկրու-
ջը տեսաւ մի տղայ և բղաւելով հարցրեց նրան.

—Այսօր ինչ օր է, տղայ:

Տղան զարմացաւ, թէ ինչպէս Սկրուջը չը-
գիտէ որ այսօր Քրիստոսի ծնունդն է, և ասաց:

—Այսօր Քրիստոսի ծնունդն է:

—Ուրեմն միթէ դեռ չանցաւ նա. միայն մէկ
գիշեր էր նա: Լսիր, փոքրիկ, գիտես մսավաճառի
խանութը, որ փողոցի այն կողմն, անկիւնումն
է գտնուում:

—Գիտեմ:

—Ապրես տղաս: Չգիտես արդեօք, վաճա-
ռուած է այն մեծ բազը, որ այնտեղ էր:

—Ո՞րը, այն, որ համարեա՛իմ մեծութեամբ է:

—Այո՛, այո՛, տղաս: Ա՛յ, խելօք տղայ:

—Չէ, դեռ չէ վաճառուած: Նա դեռ այնտեղէ:

—Վազիր խնդրեմ այնտեղ և ասա, որ բա-
զը բերեն այստեղ:

—Ե՛, սուտ ես ասում:

—Չէ, չէ, տղաս, հանաք չեմ անում: Վա-
զիր շուտով, սրա համար քեզ փող կըբաշխես:

Տղան վազեց: Սկրուջն ինքն իրեն ասաց.
«ես այն բազը կուղարկեմ իմ գրագիր Բօբի
համար. նա կըզարմանայ թէ ո՞վ ուղարկեց: Այս
լաւ բան կըլինի: Բազն իւր փոքրիկ Թով-
մասից էլ մեծ է:

Մսավաճառը բերեց բազը: Սկրուջը չը-
նորհաւորեց նրա տօնն և ասաց,

—Այդպիսի մի բազ չես կարող նրա
տուն տանել, լաւ է կառք վարձես:

Սկրուջն ասաց մսավաճառին թէ ուր է տա-
նելու բազը, վճարեց բազի փողը, նոյն-
պէս կառքի փողը, յետոյ տղային փող ընծա-
յեց, նստաւ աթոռի վրայ և ծիծաղեց մինչև ար-
տասուելը:

Սրանից յետոյ Սկրուջը հագնուեց և փողոցը
դուրս գնաց: Փողոցում ժողովուրդը խումբ խումբ
պտտում էր: Սկրուջն ուրախ տրամադրութեամբ
նայում էր ժողովրդին և ժպտում: Ով որ նրան
ասաց. «բարի լոյս, շնորհաւոր ծնունդ»: Եւ Սկրու-
ջը շատ ուրախացաւ այսպիսի ողջոյնի վրայ, որ
վաղուց չէր լսել:

Յետոյ նրան պատահեց այն պարոնն, որ ծը-
նընդեան երեկոն եկել էր Սկրուջից փող խնդրելու
խեղճերի համար:

Սկրուջն ամաչում էր նրան տեսնել, բայց
այժմ հասկացել էր, թէ ինչպէս պէտք է քաւել
իւր մեղքը. նա բռնեց այդ պարոնի երկու ձեռ-
քերն և ասաց նրան.

—Ի՞նչպէս է ձեր առողջութիւնը: Ես յոյս
ունիմ, որ դուք երէկ շատ հաւաքեցիք: Շատ լաւ
էք անում, որ հաւաքում էք խեղճերի համար:

—Գուք, պարոն Սկրուջն էք, կարծեմ:

—Այո՛, ես—ինքս եմ: Խնդրեմ ներէք իմ երե-

կուայ վարմունքն և խնդրում եմ... Այստեղ Սկրու-
ջըն ինչ որ փսփսաց պարոնի ականջին:

— Աստուած իմ: Հաւատամ այդքան շատ:

— Բայց ես ուզում եմ միանգամից վճարել բո-
լոր մերժումներիս համար:

— Չը գիտեմ, ինչպէս շնորհակալութիւն յայտ-
նեմ այդքան բարիքի համար:

— Խնդրեմ վաղն անցէք գրասենեակս փող

ստանալու և ամեն անգամ երբ հարկաւոր լինի
եկէք ինձ մօտ: Կրգա՞ք:

— Անպատճառ, անպատճառ:

— Շնորհակալութիւն:

Յետոյ Սկրուջն առաջ անցաւ, ամբօխին նա-
լեց, երեխանց փայփայեց, աղքատներին խօսեցրեց,
լուսամուտներից ներս նայեց — և այս բոլորը նրան
մխիթարում էր: Յետոյ նա գնաց իւր եղբորորդու
մօտ: Երկար նա ման եկաւ դռան առաջ, չըվստա-
հանալով ներս մտնել: Վերջապէս զանգը քաշեց:

Գուռը բացեց օրիորդը: Նա հարցրեց.

Տանն է:

— Տանն է. ճաշարանումն է:

Սկրուջը ներս մտաւ և կանչեց.

— Յովհաննէս:

Եղբորորդին և նրա կինը վեր թռան սեղա-
նից և բացականչեցին:

— Աստուած իմ. քեռի Սկրուջը:

— Այո՛, ես եմ: Ես եկայ ձեզ հիւր ճաշի: Կը-

ներես ինձ, Յովհաննէս:

Յովհաննէսն ուրախութեամբ առաջն ընկաւ,
ձեռքը սեղմեց. ուրախացան նրա կինն ու քոյրե-
րն, ամենքն ուրախացան և ամենքն էլ իրենց
բազաւոր համարեցին:

Միւս օրը Սկրուջը շատ կանուխ գնաց իւր
գրասենեակը: Նա կամեցաւ իւր գրագրից առաջ
իւր գրասենեակը գտնուել:

Այդպէս էլ եղաւ: Սկրուջն իւր սենեակի դու-
ռը բաց թողեց, որպէսզի տեսնի, թէ երբ կըգայ
գրագիրը: Գրագիրն եկաւ. դռան յետեւը վե-
րարկուն կախեց, մի ակնթարթում իւր տեղը նըս-
տեց և սկսեց գրել: Սկրուջը սուտանց տուեց և
մըմուաց իւր նախկին անախօրժ ձայնով.

— Այս քնչ է նշանակում, որ այդպէս ուշ էք
գալիս:

— Ներեցէք, խնդրեմ, ես մի փոքր ուշացայ.
այլևս այսպիսի բան չի պատահիլ. տարէնը մի ան-
գամ է լինում այսպիսի մեծ տօն:

— Այդ բոլորը շատ լաւ էք ասում. — ասաց
Սկրուջը. — բայց ես ձեզ, պէտք է ասեմ սիրելիս,
որ չեմ սիրում այդպիսի պատճառներ լսել: Եւ
սակայն, — աւելացրեց նա, վեր թռչելով աթոռից
և Բօբի կողքից խփելով այնպէս որ, խեղճ Բօբը
միանգամից ընկաւ իւր սենեակը, — և սակայն, կա-
մենում ես աւելացնել ձեր ուռճիկը:

Բօբն ահից դողում էր. կամեցաւ վերցնել
քանոնը, զարկել Սկրուջին, վզից բռնել, կանչել
մարդկանց, որ Սկրուջին կապեն իբրև խելագար և

գժանոցը տանեն, երբ լսեց Սկրուջի հետևեալ խօսքերը.

—Շնորհաւոր ծնունդ, Բօբ, և բարեկամաբար շփեց իւր գործակատարի թիւը: Ես ձեզ կաւելացնեմ ձեր ռոճիկն և կաշխատեմ օգնել ձեր աշխատասէր ընտանիքին: Այսօր դուն իմ հիւրն ես և մենք կըխօսենք, Բօբ, մեր գործերի մասին:

Սկրուջն ոչ միայն իւր խոստմունքը կատարեց, այլ և արեց աւելին, քան խոստացել էր: Իսկ Թովմասի մասին հոգ տարաւ իւր կեանքի բոլոր ժամանակը:

Այսպէս Սկրուջն այդ ժամանակից սկսած բոլորովին ուրիշ, բայց շատ լաւ մարդ և լաւ քաղաքացի դարձաւ: Եւ երբ երբեմն, երբեմն լիշում էր իւր անցեալ չոր ու ցամաք, անպէտք կեանքը, լի ամեն տեսակ հոգսերով ու հոգեկան տանջանքներով, առանց հաշիւ տալու թէ ինչո՞ւ և ո՞ւմ համար էր և համեմատում ներկայի հետ, շատ ուրախանում էր և երջանիկ էր զգում, որ իւր կեանքի ընթացքն այնպէս փոխուեց, որ այսուհետեւ սկսեց ապրել ոչ միայն իւր, այլ և իւր նմանների համար:



20 n.

~~10~~ 3917
3918
3919
3920

0008448
0008449
~~0008450~~
0008450
0008451

ՀՀ Ազգային գրադարան



NL0008451

ՀՀ Ազգային գրադարան



NL0008450

ՀՀ Ազգային գրադարան



NL0008449

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0008448

